



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՓԱՐԻՋԻ «ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ»-Ի
ՏՆՕՐԵՆՈՒԹՅԱՆԸ, ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻՆ,
ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ, ՊԱՇՏՈՆԵՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ
ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆԸ

«ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ»-Ի ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՆ,
ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻՆ ԵՒ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ,
ՊԱՇՏՈՆԵՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ
ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՓԱՐԻՋ

Մեր ժողովուրդի նորագույն պատմության հորիզոնին վրայ, իր արժանատի տեղը ունի «Դպրոցաւեր տիկնանց վարժարան»-ը, հիմնուած Կ. Պոլսոյ մէջ 1879 փրկչական թուականին:

Հարիւր տարիներ առաջ Վոսիորի գեղածիծաղ ափերուն, արևմտահայոց հոգևոր մշակութային զարթոնքի օրերուն էր, երբ ազգային վերածնունդի տեսիլքը ունեցող առաքինազարդ հայուհիներու նախաձեռնութեամբ, օրիորդներ Նուրիկ Սիմոնեան, Թագուհի Պալթազարեան և Արմաիր Արամեան, կեանքի կոչուեցաւ «Դպրոցասիրաց» աղջկանց վարժարանը՝ նպատակ ունենալով դաստիարակներ պատրաստել գաւառի կրթական հաստատութիւններու համար և այսպիսով հոգևոր լոյս ու գիտութիւն տարածել արևմրտահայոց աշխարհի տարածքի վրայ:

Շուտով «Դպրոցաւեր»-ը դարձաւ համազգային նշանակութիւն ունեցող հաստատութիւն և նախախնամական դեր կատարեց համայն հայութեան ազգային վերածնունդի խանդավառ այդ օրերուն:

Բայց աւաղ, 1915-ի հայասպան մրրիկը չխնայեց նաև «Դպրոցաւեր»-ին ու հնձեց տարաւ, բնաջինջ ըրաւ հարիւրաւոր վարժարաններ, հազարաւոր կրթական մշակներ, տասնեակ հազարաւոր մատաղ հայ աղջիկներ:

Աստուած սակայն բոլորովին չլքեց մեր ժողովուրդը և կարճ ժամանակ անց հայոց մթագնած երկնակամարի վրայ նոր լոյս ծագեցաւ՝ նոր զարթօնքի, նոր վերածնունդի ի Հայաստան և ի ափիոս աշխարհի: Այսպէս է որ «Դպրոցաւեր»-ի տեսլապաշտ հիմնադիրներու ոգին կրող, տնօրէնութիւն

տիկին Մուրատ Ակիլինէ Պոյաճեանի հերոսական ջանքերով, վարժարանը 1922-ին փոխադրուեցաւ Ֆրանսա և հաստատուեցաւ Փարիզ 1928 թուականին:

Այդ օրէն ահա «Դպրոցասէր»-ը կը շարունակէ իր պատմական առաքելութիւնը, նուիրում հայ դպրութեան ու ազգային դաստիարակութեան ազնի գործին, գնահատում ու սիրում բոլորի կողմէ:

«Դպրոցասէր»-ը նոր պայմաններու մէջ, բնականաբար չէր կրնար ունենալ նախկին իր ընդարձակ ցանցը կրթական հաստատութիւններու, սակայն ան յաղթահարելով բազում դժուարութիւններ, յաջողեցաւ լոյս քաղաքին մէջ վառ պահել ջահը իր լուսաբաշխ հիմնադիրներուն, ջահը հայ հատարին, հայ հոգիին:

Այսօր, «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի հարիւր տարիներու կեանքին ու գործունէութեան սեմին Մենք՝ Հայրապետ Հայոց, Մեր հայեացքը դէպի երկինք, կ'աղօթենք Փրկչին մեր Յիսուսի Իջման սուրբ Սեղանի առջև, որ Տէրը Իր պահապան ու օգնական աջը միշտ հաստատ պահէ վատակաշատ այս կրթական հաստատութեան վրայ, նոր ուժ ու եռանդ պարգևէ Վարժարանի արդի բարեջան տնօրէնուհի վարիչին, Խնամակալ Մարմին աւճնուէր անդամներուն և անխոնջ կրթական մշակներուն, որպէսզի շարունակեն իրենց կրթանուէր աշխատանքը:

Այս հանդիսատր առիթով, Մեր խօսքը և կոչը կը կամենանք ուղղել նաև համայն հայութեան որ ի Ֆրանսա և յերոպա, որպէսզի բոլորը նեցուկ կանգնին բարոյապէս և նիւթապէս «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ին ի Լը Ռէնսի, որպէսզի ան հետզհետէ առանել արդիւնատուութեամբ ի կատար ածէ իր հոգեշէն ու հայապահպան առաքելութիւնը հայ սփիւռքի ծոցին մէջ:

Օրհնութիւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի անմոռաց հիմնադիրներուն:

Օրհնութիւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի մեծ վաստակին և անոր արդի առաքելութեան:

Օրհնութիւն «Դպրոցասէր տիկնանց վարժարան»-ի Խնամակալ Մարմնին ու բարեկամներուն, ուսուցչական կազմին, պաշտօնէութեան և աշակերտութեան:

«Այլ Աստուած չոսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յոսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հոով. ԺԵ 13). ամէն:

Կարպէ Թ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսա կոնդակս ի 5 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
և ի տունարիս հայոց ՌԵԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 983